

**ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ՝ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲԱԶԻՄԱՅԻՆ ՀԻՄՔԻ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

ՎԱՐԴԱՆ ԱՅՎԱԶՅԱՆ

Համաշխարհային գործընթացների աննախադեպ դինամիկան նորագույն պատմության վերջին ժամանակահատվածում ըստ էության հիմնարար մարտահրավեր է համաշխարհային հանրության առջև այն առումով, թե արդյոք վերջինս կարող է ինքնուրույն արձագանքել նոր իրողություններին, որոնք առաջացել են աշխարհակարգի ընդհանուր կոնֆիգուրացիայի դինամիկ փոփոխությունների և միջազգային իրավունքի գործող համակարգի իրավակարգավորումների շրջանակներում պետությունների փոխհարաբերությունների հետևանքով:

Ըստ էության դա մարտահրավեր է իրավագիտությանը՝ որպես հիմնարար գիտության, որի առջև համաշխարհային հանրությունը պետք է քաղաքակրթական գործընթացների շրջանակներում համընդհանուր քննարկմամբ խնդիր դնի քաղաքական համակարգի, տեխնոլոգիական գործընթացի և տնտեսության գլոբալացման աննախադեպ փոփոխությունների հետևանքով առաջացած նոր իրողությունների պայմաններում մշակելու իրավական կարգավորման նոր համակարգ:

Սրան ընդունակ չլինելը կարող է հանգեցնել դրամատիկ վերջաբանի, որի պայմաններում իրավակարգավորումը կունենա ոչ իրավական ձևաչափ, և խնդիրների լուծումը իրավականից կտեղափոխվի ուժային հարթություն: Սա որպես հակամարտությունների լուծման մեթոդ, զինված բախումների լուծման ակնհայտորեն անմիջական ուղին է:

Այս առումով համաշխարհային հանրության կոնսոլիդացված ունակությունը հնարավոր է ապահովել մի կողմից համաշխարհային հանրության իրավագիտակցության համարժեք մակարդակի և միջազգային իրավունքի շրջանակներում իր իրավասուբյեկտության դեպքում՝ քաղաքացիական իրավասության մետրիկայով՝ աշխարհի քաղաքացու ձևաչափում, մյուս կողմից՝ գիտական հանրության փաստացի ունակությամբ (գիտական իրավասուբյեկտության շրջանակներում) ստեղծելով իրավագիտության միասնական մեթոդաբանական հարթություն, որը մոլորակային և պետության մակարդակից մինչև առանձին մարդու իրավունքների ապահովման մակարդակ կապահովի իրավունքի գործողության սահմանադրական լեգիտիմությունը հետև-

յալ հիմնարար սկզբունքների ապահովմամբ.

- իրավունքի գերակայություն,
- իրավահավասարություն,
- խաղաղ համագոյակցություն և պատերազմի՝ որպես հակա-իրավական և հակասահմանադրական ակտի բացառում:

Իրավագիտության առջև ծառայած գլոբալ մարտահրավերները, կարծում ենք, կարելի է ներկայացնել երեք հիմնական հարցադրումներին և դրանց «այո» կամ «ոչ» պատասխանների միջոցով:

1. Համաշխարհային հանրությունն արդյոք ունի՞ իրավական կարգավորման անհրաժեշտություն:

«Ոչ» պատասխանի դեպքում ունենում ենք համաշխարհային հանրության՝ որպես իրավունքի օբյեկտի և սուբյեկտի կորուստ:

Դրա գլոբալ հիմնախնդիրը շարունակում է մնալ այն հանգամանքը, որ մարդկությունը դեռևս անկարող է հասկանալու այդ նոր ձևաչափում միջազգային հարաբերությունների համակարգի և ներպետական հասարակական հարաբերությունների հակամարտաբանական բնույթը, ինչն էլ անհնար է դարձնում վերջինիս կողմից փաստացի ձևավորված հակամարտությունների կառավարումը, քանզի այսօրվա դրությամբ գոյություն չունեն համակարգային մակարդակում նախապես մշակված և գործի դրված իրավական կարգավորման կառուցակարգեր, որոնք հնարավորություն կստեղծեն համակարգային մակարդակում արձագանքել այդ հակամարտություններին:

Միջազգային իրավունքի ինստիտուտի կայացման անկատարության և անավարտության հետևանքով միջազգային հակամարտությունների և բախումների լուծման (իրավական) հարցում ոչ միայն խախտվում է իրավունքի գերակայության սկզբունքը, այլև իր բոլոր դրսևորումներում և իրավունքի էության միանշանակ ընկալման բացակայության պայմաններում այն սկզբունքորեն չի կարողանում կիրառվել, որի հետևանքով փոխակերպվում է միանգամայն այլ՝ ոչ իրավունքի սուբստանցի: Արդյունքում գործադրվում է «ուժի իրավունքի» ռեցիդիվը, որի պայմաններում իրավունքի հիմնական խնդիրը դառնում է ուժի լեգիտիմացումն ու հիմնավորումը:

Այս հանգամանքը լուրջ վտանգ է պարունակում, քանի որ իրավունքի էության ուժային ընկալման ուղղությամբ ընթացող շեղումը կհանգեցնի քաղաքակրթության կարգավիճակով հանդես եկող իրավական մարդկության կայացման պատմության կուտակված բաղադրիչի ժխտմանը, և համապատասխանաբար կարող են վերացվել իրավագիտության և պրակտիկ իրավաբանության համալիրի ձեռքբերումները որպես քաղաքակրթության ձևաչափով հասարակության կառուցվածքի բազային գործիքակազմ: Այս պարագայում անխուսափելի է դառնում հակվածությունը դեպի «իրավաբանական պոզիտիվիզմ, որը բացառում է ցանկացած իրավունք, բացի պոզիտիվից» հնարավոր-

րություն ընձեռելով վերաձևավորել և խեղաթյուրել բազային իրավական կատեգորիաները, այդ թվում՝ ժողովրդավարությունը, «ուժային սցենարի» տակ վերափոխելով համաշխարհային կարգի ողջ իրավական սուբստանցիալ հյուսվածքները ընթացիկ քաղաքական ուժային դասավորության իրավիճակային իրադրությամբ:

Միջազգային իրավունքի համակարգի մշակման համակարգային հակամարտության առկայությունը, որը ծագում է իրավական կարգավորման նույն համակարգի ներսում տարբեր մոտեցումների հայեցակարգային անհամատեղելիության հետևանքով, որոնցում համաշխարհային հանրությունը հանդես է գալիս որպես միջազգային իրավունքի ամրագրման առարկա, կազմակերպական առումով դրսևորվում է տարբեր սեզմենտներով: Մասնավորապես՝ համաշխարհային հանրությունը հանդես է գալիս ի դեմս

1. ՄԱԿ-ի անդամների,

2. պետական կոնգլոմերացիաների անդամների, որոնք միութենական կամ ֆեդերատիվ մակարդակի միասնական-իրավաբանական անձի շրջանակներում օժտված են իրավասուբյեկտությամբ (օրինակ՝ Եվրամիությունը),

3. պայմանագրային-կոալիցիոն կազմավորումների անդամների՝ առանց իրավասուբյեկտության ձևավորման (Մեծ ութնյակ, Մեծ քսանյակ),

4. բիլատերալ միջկառավարական պայմանագրերի կողմերի:

Այս պարագայում տարբեր մոտեցումները փաստացի վերարտադրում են տարբեր «միջազգային իրավունքներ», որոնք նախաձեռնում են համակարգային հակադրություններ՝ սկսած աննշան տարաձայնություններից մինչև մեկը մյուսի համակարգային փոխադարձ բացառում, ինչն էլ հայացակարգային, գործառական և օպերացիոն մակարդակներում հանգեցնում է «միջազգային իրավունքի պատերազմի»:

Առաջին հարցադրմանը «այո» պատասխանելու դեպքում հետևում են համաշխարհային հանրության՝ որպես իրավունքի օբյեկտի իմաստավորումը և համաշխարհային հանրության՝ ի դեմս ՄԱԿ-ի որպես իրավունքի սուբյեկտի ընդգծումը, որի շրջանակներում գլոբալ քննարկմամբ քաղաքակրթական գործընթացի առջև համաշխարհային հանրության պարտավորությունների ձևաչափում պետք է տեղի ունենա մոլորակային մասշտաբի իրավաստեղծագործությունը և իրավակիրառումը:

Մարդկությունը պետք է պատասխանատու կերպով և միանշանակ գիտակցի, որ իր գոյատևումն ու կենսագործունեությունը չեն կարող ունենալ ոչ համակարգային բնույթ և գտնվել անկատարելի ինքնաձևավորման ռեժիմում, և գլոբալ քաղաքակրթական էկզիստենցիալ համակարգի շրջանակներում պետք է կյանքի կոչի համաշխարհային հանրության հավաքական գոյը՝ իրավական կարգավորման համար-

Ժեք գործուն կառուցակարգերով:

Վերը նշված պոստուլատի ընդունման պարագայում մարդկությունը հանդես է գալիս որպես ներունակ իրավագիտակցությամբ օժտված բանականության կրող, որի հիման վրա գործի է դրվում իրավագենեզը և իրավաձևավորման գործընթացը, որում ձևավորվում է համաշխարհային հանրության՝ որպես էկզիստենցիալ համակարգի շրջանակներում իրավական ամրագրման օբյեկտի իրավասուբյեկտությունը: Այս դեպքում իրավական մետրիկան կառուցակարգվում է բանականության առկայության պարտադիրության սկզբունքի հիման վրա, համակարգի՝ որպես ցանկացած գոյի սուբստանցիալ հիմքի օբյեկտիվ սկզբի և համակարգայնության՝ որպես հասարակության գոյության ձևի պարտադիր հատկության, որը հանդես է գալիս որպես լեգիտիմության առաջնային դրսևորում հիմնակառուցման (constitution) շրջանակներում: Լեգիտիմությունը՝ որպես իրավական չափանիշ, գործի է դնում ինչպես մարդկության, այնպես էլ համաշխարհային հանրության՝ որպես իրավական օբյեկտների իրավաբանական կարգավիճակը ամրագրող սահմանադրականության ակտը:

Սա իրավագոյացման առաջին սահմանադրական ակտն է, որի արդյունքում ձևավորվում է իրավական տարածությունը, որը իրացնում է կառավարելի էկզիստենցիայի կարգավորվածությունը արժեքների կոորդինատների համակարգում՝ նրանում զետեղելով հասարակությունը, դրանով իսկ ձեռք բերելով իրավական լեգիտիմություն: Այսպիսով, սահմանվում է հեգելյան «իրավունքի և ոչ իրավունքի»¹ շեմը, և տեղի է ունենում իրավունքի բովանդակային գործողության տարածության գոյացումը:

Սա ամենաառանցքային ասպեկտն է, որի վրա կառուցվում է երկրորդ պոստուլատը:

Մարդկությունը պետք է ունենա կամք և գործառական ունակություն կառուցելու իր էկզիստենցիալ համակարգը՝ որպես համալիր տեխնոլոգիական գործընթաց, որը ներառում է բոլոր ենթահամակարգերի կառուցումը, որոնց համակարգային փոխգործակցության արդյունքում ապահովվում է համաշխարհային հանրության ներդաշնակ ու հավասարակշռված գործառական էկզիստենցիան ինչպես վերպետական ու վերազգային, այնպես էլ ներպետական և ազգային մակարդակներում:

Այս պոստուլատի ընդունումը նշանակում է, որ մարդկությունը, արդեն ունենալով համարժեք իրավագիտակցություն և ինքնագիտակցություն՝ նույնականացնելու իրեն որպես բանական գոյի (բարձր կազմակերպված բանականության կրողի բնական ներունակ իրավասուբյեկտություն), ճանաչելով համակարգային մակարդակում իր էկզիս-

¹ Տե՛ս Գեգել Գ. Վ. Փ. *Փիլոսոփիա փրա*. Մ.: Мысль, 1990:

տենցիայի կառավարման անհրաժեշտությունն ու օբյեկտիվ բնույթը, որպես ֆունկցիոնալ-ակտիվ արարող, ստեղծագործող, պարտականություն է ստանձնում կառուցելու էկզիստենցիայի համակարգ ֆունկցիոնալի իրավասուբյեկտության ձևաչափում:

Սա իրավագոյացման երկրորդ սահմանադրական ակտն է, որում «մարդկություն» և «համաշխարհային հանրություն» իրավական օբյեկտները, ունենալով կյանքի և գոյատևման սահմանադրական իրավունք, արդեն որպես ֆունկցիոնալներ ծանրաբեռնվում են իրենց ճակատագրի և կենսապահովման համար պատասխանատվությամբ՝ դրանով իսկ ավարտելով լիարժեք իրավասուբյեկտության ակտը: Այդպիսով տեղի է ունենում իրավունքի ֆունկցիոնալ գործողության տարածագոյացումը: Այսինքն՝ տեղի է ունենում իրավունքի օնտոգենեզ՝ որպես իրավունքների և պարտականությունների սինթեզ միասնական ամբողջում, որի հետևանքով գործառականորեն իրացվում է իրավագոյացումը, քանի որ արդեն առկա են ինչպես իրավունքի կառուցվածքը, այնպես էլ դրա կրողը, որի դերում հանդես է գալիս սուբյեկտը: Այդպիսով համակարգագոյացումը ձեռք է բերում իրավական բնույթ, իրավական օբյեկտի հատկություն, համապատասխանաբար և իրավական բովանդակություն պարտավորվածության, կարգավորվածության և կառավարելիության կազմվածքով ստեղծվող համակարգի շրջանակներում: Ինչպես նաև սիստեմատեխնիկական հանդես է գալիս որպես իրավական օբյեկտ՝ ֆունկցիոնալի համակարգագոյացման տեխնոլոգիական իրականացման բովանդակային առաքելությամբ:

Ցավոք, ներկայումս այդ գործընթացն իրականացվում է միջազգային իրավունքի նեղ դոկտրինալ միջանցքում (մասնավորապես՝ որպես իրավունքի սուբյեկտ հանդես է գալիս կոնվենցիոնալ կոալիցիան, որն իրեն վերագրում է համաշխարհային հանրության իրավասուբյեկտություն՝ առաջացնելով համակարգային հակամարտություն, որում համաշխարհային հանրության առանձին մասը, ի դեմս պետությունների խմբի, առաջնորդվում է սեփական նեղ և ուղղորդված շահերով):

Իրավագիտության առջև ծառայած երկրորդ մարտահրավերը հետևյալ հարցադրումն է. անհրաժեշտ են արդյոք սահմանադրականությունը և սահմանադրական իրավակարգավորումը համաշխարհային հանրության իրավունքի համակարգում:

«Ոչ» պատասխանի կողմնակիցներն այս առնչությամբ բերում են հետևյալ փաստարկները:

- Համաշխարհային հանրությունը չգրված սահմանադրության ֆենոմենոլոգիայով օժտված է ինքնակարգավորման հատկությամբ:

- Սկզբունքորեն անհնար է միասնական հասարակության մեջ համակցման կառուցակարգով միավորել տարբեր հասարակական կազմավորումները մոլորակային մասշտաբի միասնական կոնգլոմերացիայի մեջ՝ որպես մեկ միասնական ամբողջություն, ընդգծելով հա-

ամաշխարհային հանրության իրավասուբյեկտությունը:

- Պահանջվում է առաջնորդող սուբյեկտ-լիներ հեգեմոնի լիազորությունների միաբևեռ իրավական կարգավիճակով, որը ուժեղի կամ ուժի իրավունքի շրջանակներում կէմույացնի սահմանադրական պարտականություններ՝ հանուն իրավունքի գերակայության սկզբունքի ապահովման:

- Համաշխարհային գործընթացի միաբևեռ կառավարման համակարգի և բազմաբևեռ կամ պոլիցենտրիկ կազմավորումների ձևավորման անհնարինության դեպքում, նույնիսկ կոնգլոմերացիայի անդամների հանրության համար սահմանադրության ձևավորման դեպքում անխուսափելիորեն կծագեն համակարգային հակամարտություններ այդ կոնգլոմերացիաների ներսում, ինչպես նաև կսանձազերծվի պատերազմ գրված և չգրված սահմանադրությունների և ազդեցության ոլորտների բաշխման ուժային կենտրոնների միջև:

Վերոնշյալ փաստարկներն իրենց ամուր տեղն են գտել պոզիտիվիզմի զինանոցում, որի հարացույցի համաձայն՝ սահմանադրականությունը իր դարն ապրել է, և անհրաժեշտ է վերադառնալ այն հարցադրմանը, որ **համաշխարհային հանրության իրավունքի համակարգում սահմանադրականության և սահմանադրական իրավակարգավորման անհրաժեշտությունն չկա, և ընդհանրապես համաշխարհային հանրությունը իրավական կարգավորման անհրաժեշտություն չունի:**

«Այո» պատասխանի դեպքում՝ որպես համաշխարհային հանրության քաղաքակրթական կարողությանն ուղղված մարտահրավեր, հայեցակարգային, ֆունկցիոնալ և օպերացիոն մակարդակներում համալիր ամբողջականությամբ առաջանում են հետևյալ կենտրոնական հարցադրումները, որոնք պետք է ստանան իրենց հստակ պատասխանները.

- Ինչպիսի՞ն պետք է լինի աշխարհակարգի իրավական կարգավորման համակարգը:

- Որո՞նք են աշխարհակարգի իրավական կարգավորման համակարգի կառուցման մեթոդաբանական և մեթոդական հիմքերը:

- Գոյություն ունի՞ արդյոք և ո՞րն է աշխարհակարգի իրավական ծագումնաբանության համընդհանուր ճանաչված և մատչելի հայեցակարգային հիմքը:

- Որո՞նք են աշխարհակարգի հավասարակշռված գործառավորման օպերացիոն կանոնակարգը և իրավակիրառման մեխանիզմը:

- Արդյոք միջազգային իրավունքի ընթացիկ համակարգը, որը գործառավորվում է դոկտրինալ մակարդակով, համապատասխանո՞ւմ է և կարո՞ղ է լուծել այդ խնդիրը:

- Ո՞րն է միջազգային իրավունքի ծագումնաբանության սիստեմատեխնիկան, կոնստիտուցիոնալիզմի դերը դրանում, և կարո՞ղ է արդյոք այն սկզբունքորեն իրեն թույլ տալ չհենվել կոնստիտուցիոնալիզմի վրա:

• Ինչպե՞ս ապահովել միջազգային իրավունքի՝ որպես համակարգի ամբողջականությունը իր կայացման բոլոր փուլերում՝ մեկից մյուսին ներդաշնակ անցումով. որո՞նք են վերոնշյալ փուլերը: Վերջին հարցադրման պատասխանի մեթոդաբանությունը ենթադրում է.

1. Զրոյական մակարդակում միջազգային իրավունքի սուբյեկտ պետք է լինի լիարժեք պետական կառույցը (ինքնիշխան պետության իրավունք):

2. Առաջին մակարդակում միջազգային իրավունքը պետք է հանդես գա որպես միջազգային համագոյակցության իրավունք:

3. Երկրորդ մակարդակում միջազգային իրավունքը պետք է հանդես գա որպես համագործակցության իրավունք:

4. Երրորդ մակարդակում միջազգային իրավունքը պետք է հանդես գա որպես հասարակության կյանքի կազմակերպման ունիվերսալ շարժում, որը ենթադրում է ինտեգրացիայի իրավունքը:

5. Չորրորդ մակարդակում միջազգային իրավունքը պետք է հանդես գա որպես համաշխարհային հանրության իրավունք, որը ենթադրում է միջազգային տրանսնացիոնալիզմը:

Իրավագիտության երրորդ կարևորագույն մարտահրավերը հետևյալն է. արդյո՞ք գիտակցվում է, որ համաշխարհային հանրության իրավական կարգավորումը գտնվում է համակարգային հակամարտության մեջ, որը գեներացնում է պերմանենտ ցիկլիկ ճգնաժամեր և միջազգային իրավունքի ցնցումներ:

Սա մարդկության առջև ծառայած հիմնական քաղաքակրթական մարտահրավերն է այն առումով, թե իրավական միտքն ու գիտությունը, ի դեմս իրավագիտության, արդյոք ունակ են հաղթահարելու այս հիմնախնդիրը, որն առնչվում է անկանխատեսելի հակամարտությունների ծագմանը և համակարգային լուծմանը, հակամարտության իրավական բնույթի, ինչպես նաև իրավունքի հակամարտաբանական բնույթի բացահայտմանը, որի արդյունքում կառավարչական գիտությունը կկարողանա իրավունքի գերակայության հիման վրա մշակված ու գործող իրավական տարածությունում ապահովել համաշխարհային հանրության սահմանադրական վարքագիծը:

Այս խնդիրը հնարավոր է լուծել բացառապես հիմնարար մոտեցման մակարդակում, այսինքն՝ հիմնարար գիտության գործիքակազմով: Իրավագիտությունը համալիր գիտություն է, որն ուսումնասիրում է իրավունքի, պետության և կառավարման բովանդակային հատկությունները: Ավելի կոնկրետ այն ուսումնասիրում է իրավունքի **ծագմանաբանությունը, դրսևորումը, օպերացիոն կիրառումը** և նկարագրում է բոլոր իրավական երևույթները (հստակ և միանշանակ սահմանելով հետազոտության օբյեկտները, ինչպիսիք են իրավունքը, պետությունը, կառավարումը, իրավական կարգավորման համակարգը և այլն): Ուսումնասիրությունների միջոցով կուտակված գիտելիքների օգտագոր-

ծումը հնարավորություն է ընձեռում նախագծելու ցանկացած իրավական կարգավորման համակարգ և օպերացիոն մակարդակում այն կիրառելու համալիր հասարակական գործընթացի կառավարումն ապահովելու և իրականացնելու համար: Քանզի ակնհայտ է, որ իրավունքի մասին գիտության վերը նշված երեք բաղադրիչները (*Ճագումնաբանություն, դրսևորում, օպերացիոն կիրառում*) պետք է դիտարկվեն որպես մեկ ամբողջություն, ամբողջական համալիր: Դա իրավագիտության՝ որպես գիտության մեթոդաբանական համալիրի առջև ծառայած հիմնական խնդիրն է: Հիմնախնդրի լուծված չլինելը դրսևորվում է երկու ձևով. ա) երբ խնդիրը դրվում է, սակայն գիտական իմացության և հետազոտության մեթոդաբանական գործիքների անբավարարության պատճառով լուծում չի ստանում, բ) ավելի վատ՝ խնդիրն ընդհանրապես չի դրվում: Արդյունքում իրավագիտությունը ակադեմիական գիտական ճանաչողության հարթությունից՝ խարսխված ֆունդամենտալ տեսական բազայի վրա, տեղափոխվում է ընդամենը դոկտրինալ տրամաբանական համակարգի հարթություն, որում դրույթները որոշվում ու սահմանվում են առավելապես քաղաքական կառույցների կողմից կամ լրագրողական վերլուծության հիման վրա, որոնք, որպես կանոն, հիմնականում ունեն ընթացիկ իրադարձությունների և սահմանազանցումների (էքսցեսների) մեկնաբանության բնույթ: Արդյունքում ներքին մտածողության մեջ արմատավորվում է այն թեզը (անգամ ակադեմիական գիտական շրջանակներում), որ իրավագիտությունը կախված է քաղաքականությունից և համարվում է վերջինիս հետևանքը, մինչդեռ պետք է լինի հակառակը: Այս ուղերձն ընկալվում է որպես ի վերուստ տրված իրողություն և ոչ միայն խաթարում է քաղաքացիական կոմպետենտության (որը գտնվում է կայացման գործընթացում ինչպես ակադեմիական գիտական կոնտինգենտի, որոշումներ ընդունող քաղաքական կորպուսի, այնպես էլ հասարակության մյուս շերտերի մոտ) հյուսվածքները, այլև իրավագիտության կարգավիճակը վերափոխում է ընթացիկ քաղաքականության գործիքի կամ լավագույն դեպքում մոտավորապես նախագիտական դիսցիպլինի: Մեր կարծիքով, հենց այս ասպեկտն էլ համարվում է արդիականության հիմնական մարտահրավերը:

Հիմնարար գիտությունը կազմակերպված մտքի դրսևորման այլ ձևերից (պայմանական տեսական հայեցակարգեր, իրավիճակային հայեցակարգեր, դոկտրինալ դրվագային սահմանումներ, օպերացիոն-գործիքային համակարգեր, որոնք կենտրոնանում են բացառապես գիտական մտքի կիրառական ասպեկտի վրա, բիհեիորիստական համակարգեր, էլ չասած պսևդո կամ պարագիտական գիտական համակարգերը, որոնք վերլուծական գործընթացը բերում են վերլուծական ադանդավորության հարթություն) տարբերվում է նրանով, որ ի սկզբանե իր առջև խնդիր է դնում ապահովել տեսական բազիսի, հետազոտությո-

յան գիտավերլուծական գործիքային համալիրի ամբողջականություն, փորձարարական-ապրոբացիոն հաստատումների կիրառական համակարգի և կառավարման միասնական ամբողջություն: Միայն այս դեպքում են սահմանվում գիտելիքների լեգիտիմության իրավական կարգավիճակը և դրանց պրակտիկ կիրառման հետևանքների պատասխանատվությունը: Այդ կապակցությամբ քանիցս արդարացի է **իրավունքի պատմական դպրոցի ներկայացուցիչ Գեորգ Ֆրիդրիխ Պուխտան**. «Դրական իրավագիտությունը զբաղվում է արդեն գոյություն ունեցող իրավունքով, իսկ փիլիսոփայականը՝ նրանով, թե ինչպիսին պետք է այն լինի»²: Այդ մոտեցումը սկզբունքորեն աջակցություն է ստանում գրականության մեջ: Մասնավորապես, իր «Իրավունքի ընդհանուր տեսություն» աշխատության մեջ Ժան Լուի Բերժելը հաստատում է. «Խոսքն այն մասին է, որ իրավունքը պետք է ուսումնասիրվի այնպիսին, ինչպիսին կա, այլ ոչ թե այնպիսին, ինչպիսին պետք է լինի»³:

Իրավունքի էության միանշանակության բացակայությունը իրավագիտության համակարգի անկատարության հիմնապատճառն է, որի հետևանքով իրավունքի գործողությունը թե՛ տեսական, թե՛ կիրառական մակարդակներում չի համալրվում լիարժեք իրավաչափությամբ, որի առկայությունը պարտադիր է սահմանադրականության և սահմանադրաիրավական կարգավորում իրականացնելու համար: Ստեղծված իրավիճակի հանգուցալուծման համար առաջնահերթ նշանակություն է ստանում համալիր մեթոդաբանական գործիքակազմի մշակումը, որը կստանձնի իրավաբանական չափանիշների կազմավորումը իրավունքի էության հատկանիշների հիման վրա, հայեցակարգային մակարդակում, նրանց գործառական դրսևորման իրավական ամրագրումը և իրավակիրառման համակարգի առարկայական համալրումը համապատասխան կանոնակարգով, որի հետևանքով իրավունքի գործողությունը կունենա համակարգային ամբողջականություն:

Իրավունքի տրամաբանությունը պետք է ձևավորի իրականություն, այլ ոչ թե բխի ընթացիկ իրականությունից⁴: Իրավական մտքի և համալիր հասարակական գործընթացի ֆենոմենոլոգիայի ողջ սպեկտրի իրավական ամրագրման նկատմամբ ունեցած նման մոտեցման ծայրահեղ դրսևորումը համարվում է իրավունքի տրամաբանության համարժեքության սկզբունքի դիրքավորումը, մեթոդաբանական մակարդակում հղում անելով նախադեպին՝ որպես էտալոնի, որը սահ-

² Пухта Г. Ф. Энциклопедия права. О науке права // История философии права. СПб., 1998, с. 377.

³ Бержель Ж. Л. Общая теория права. М.: Издательский дом NOTA BENE, 2000, с. 341.

⁴ Տե՛ս **Այվազյան Վ. Ն.** Конфликтогенная природа принципа верховенства права и генезис системных конфликтов конституционно-правового регулирования // "Бизнес в законе. Экономическо-эридикский журнал", 2016, № 2, էջ 124:

մանում է իրավական տրամաբանության այնպիսի ճշմարտացիությունը, որը իրավահարաբերությունների ձևաչափում գնահատական է տալիս ընթացիկ հասարակական փոխգործակցությունների կոնֆիգուրացիային: Այսինքն՝ իրավական տրամաբանությունը բխում է նախորդող իրականությունից, թեպետ հղում է կատարվում իրավական տրամաբանության արդյունքին, որը սահմանել է իր իրավակարգավորման և իրավակիրառման իրավական կարգավիճակն ու ձևաչափը: Դա շատ բնորոշ է այն հայեցակարգի ոգուն, որը հիմնվում է պայմանագիր-գործարքի վրա, որը դրա սուբստանցիալ բնույթը օբյեկտիվ օրինաչափությունների հարթությունից (օբյեկտիվ բարոյականության և արդարության մետրիկայով) տեղափոխում է կողմերի և արդարադատության ներկայացուցիչների սուբյեկտիվ համաձայնության հարթություն՝ ձևավորելով պոզիտիվ իրավաբանություն: Գիտական առումով տեսական բազան փոխարինվում է դոկտրինալով: Հետևաբար, իրավական մտքի դոկտրինալ մակարդակը չի կարող ընկալել իրավունքի էությունը, իսկ պրակտիկ իրավաբանությունը չի կարող բացահայտել բոլոր օբյեկտների և երևույթների իրավական էությունը օպերացիոն իրավակիրառման մակարդակում, որի հետևանքով «օբյեկտիվորեն» ձևավորվում է «պոզիտիվ իրավունքի տեսական բազան», որը իրավունք է վերապահում սահմանափակվել կոնվենցիոնալ իրավասահմանումների դոկտրինալ սկզբունքով:

Միաժամանակ, առանցքային է համարվում այն, որ իրավունքի գերակայությունը ներկայումս ունի դոկտրինալ հիմք, հետևաբար դժվար թե կարելի է ակնկալել, որ իրավունքի գերակայությունը կարող է լինել հայեցակարգ, որը բոլորի ընկալման համար մատչելի լինի:

Հեշտությամբ պարզվում է, որ նույնիսկ հիմա շատ իրավաբաններ չեն զգում իրավունքի գերակայության և իրավական պետության դոկտրինաների տարբերությունը, քանի որ «իրավունքի գերակայություն» և «իրավական պետություն» հասկացությունները խառնվում են կամ ոչ ճիշտ թարգմանվում: Այս ամենը կանխորոշում է միանշանակ ընկալման բացակայությունը և միջազգային տարրնթերցումների կրճատման հիմնախնդիրը իրավունքի գերակայության, իրավական պետության և ժամանակակից աշխարհի այլ հիմնարար իրավական սկզբունքների հասարակական ընկալման վերլուծության ու նոր հետազոտությունների միջոցով:

Բանալի բառեր – *իրավունքի գերակայություն, համակարգային հակամարտություն, գենեզիս, իրավական համակարգ, սահմանադրաիրավական կարգավորում, համաշխարհային գործընթաց, գլոբալ համակարգ*

ВАРДАН АЙВАЗЯН – *Вызовы правоведению в контексте конституционного права как базисной основы правового регулирования мирового процесса.* – Статья представляет методологический инструментарий на базе феноменологического синтеза правовой конфликтологии. Выявляется правовая сущность

объектов правового регулирования через призму права как системы предотвращения и разрешения конфликтов.

Одним из ключевых недостатков, порождающих нарушение системности права, является отсутствие последовательного описания правогенеза на фундаментальном уровне, позволяющее вывести универсум права. Отсутствует качественный стандарт правообразования, поскольку нет самой логики генезиса права.

Ключевые слова: *верховенство права, системный конфликт, генезис, правовая система, конституционно-правовое регулирование, мировой процесс, глобальная система*

VARDAN AYVAZYAN – *Challenges of Jurisprudence in the Context of the Constitutional Law, as a Complete Base of legal regulation of the World Process.* –

The main purpose of this article is to present the methodological tools based on the phenomenological synthesis of legal conflict resolution, on the basis of which the identification of the legal nature of the objects of legal regulation in the light of the consideration of law as a system of conflict prevention and resolution. The central unit is the system conflict, as a tool for finding a violation of the right to integrity of the system and determine the degree of solvency of the system of legal regulation in general and constitutional legal regulation in particular.

One of the key weaknesses and causes generating Violations of system of law is the lack of consistent description of Genesis of Law at a fundamental level, allowing to bring the universalism of law, which allows, in turn, determine the system of law formation for objective quality criteria, and organizational forms of cross-relations within the society, the State, relations the outside world, in the metric of legal consolidation.

Key words: *Rule of law, Systemic Conflict, Genesis, Legal System, Constitutional-legal regulation, world process, global system*